

**ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ԵՐՐՈՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ
(2006թ. սեպտեմբերի 18-20, Երևան)**

Երրորդ խորհրդաժողովը, որը կայացավ մեր ժողովրդի համար պատմական իրադարձություն հանդիսացած՝ Հայաստանի անկախության հռչակման 15-ամյակի նախօրեին, վերահաստատում է մեր կամքն ու վճռականությունը՝ բոլոր միջոցներով նպաստելու հայոց պետականության ամրապնդմանը, որպես հայության բոլոր խնդիրների լուծման և առաջադիմության գլխավոր նախապայման:

Երրորդ խորհրդաժողովը արձանագրում է, որ անցած ժամանակաշրջանում Հայաստան- Սփյուռք փոխհարաբերությունները և գործակցությունն ընթացել են ներդաշնակ՝ համերաշխության, փոխվստահության ու հարգանքի պայմաններում, և ստեղծվել են ամուր հիմքեր հետագա արդյունավետ զարգացման համար:

Մենք ունենք ընդհանուր պատմություն, միասնական նպատակներ ու խնդիրներ, ամբողջ հայությանը և նրա յուրաքանչյուր հատվածին առանձնահատուկ առաջնահերթություններ և միայն մեր հավաքական միասնությամբ, մարդկային և նյութական ներուժի համախմբմամբ ու կենտրոնացմամբ կարող ենք լուծել մեր առջև ծառայած խնդիրները:

Հայաստանի Հանրապետությունը՝ որպես պետություն, հանձնառու է իր բոլոր կարելիություններով ապահովել այն անհրաժեշտ պայմանները, որոնք յուրաքանչյուր հայի հնարավորություն կընձեռեն լիարժեք մասնակցություն ունենալ պետության կայացման, ամրապնդման և զարգացման գործում: Խորհրդաժողովը հաստատում է, որ ազգային մեր ինքնությունը անբաժանելիորեն կապված է քրիստոնեության հետ և կարևոր ու նշանակալի է Հայ եկեղեցու առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր-բարոյական կյանքում և Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների խորացման և ընդլայնման գործում:

Խորհրդաժողովը հավանություն է տալիս Հայաստանի գյուղական աղքատության վերացման ծրագրին և կոչ անում բոլոր կառույցներին, կազմակերպություններին, մեր ժողովրդի բոլոր զավակներին ակտիվ մասնակցություն ցուցաբերել ծրագրի կազմակերպչական աշխատանքներին, ծրագրավորման և իրականացման գործում:

Մեր նորագույն պատմության մեջ, մեր ժողովրդի մեծագույն նվաճումն է Արցախի ազատագրումը, որտեղ դրսևորվեց հայության անսասան կամքն իր պատմական արդար իրավունքների նկատմամբ, և այն դարձավ համազգային միասնության, համախմբվածության ու վճռականության վառ ապացույց:

Մենք վերահաստատում ենք մեր ամբողջական պատասխանատվությունը և համապարփակ աջակցությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազատ ապրելու և ինքնորոշվելու իր պահանջների նկատմամբ: Հայաստանի անկախացումից հետո սփյուռքահայությունը հայտնվեց նոր իրողությունների առջև և նորանկախ

Հանրապետությանը բաժին հասած ծանր փորձությունների ու վտանգավոր մարտահրավերների ժամանակ ցուցաբերեց և շարունակում է ցուցաբերել աննախադեպ նյութական, քաղաքական և բարոյական աջակցություն Հայաստանին:

Միաժամանակ նույնն են իր առջև ծառայած ավանդական խնդիրները, որոնցից գլխավորը աշխարհի տարբեր հյուրընկալ երկրներում քաղաքական, կրոնական, էթնոմշակութային տարբեր պայմաններում, ազգային նկարագրի, ավանդույթների, մշակույթի և ինքնության պահպանումն ու վերարտադրությունն է, որոնց լուծմանը իր բոլոր կարողություններով աջակից է Հայաստանի Հանրապետությունը:

Խորհրդաժողովը վերահաստատում է աշխարհի բոլոր երկրներում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը հասնելու իր վճռականությունը: Խորհրդաժողովը ողջունում և իր երախտագիտությունն է հայտնում աշխարհի բոլոր մայրաքաղաքներում հայ ժողովրդի արդարախոհ բարեկամների կողմից ձեռնարկվող այն բոլոր ճիգերը, որոնք ապացուցում են ցեղասպանության հարցում համաշխարհային հանրության աճող հանձնառությունը:

Մենք համոզված ենք, որ ժողովրդավարական սկզբունքները և մարդու իրավունքներն ու ազատությունը առաջնային նշանակություն ունեն պետական ու համայնքային հաստատությունների գործունեության մեջ:

Մեզ համար հիմնարար արժեքներ են խաղաղությունը, ժողովուրդների բարեկամությունն ու փոխշահավետ համագործակցությունը, մարդու և ազգերի ազատ ապրելու ու զարգանալու իրավունքը, խղճի ու դավանանքի ազատությունը:

Մենք հանձնառու և հետևողական ենք 21-րդ դարում մեր ազգային իրավունքներն ու շահերը պաշտպանելու, համերաշխությունն ու համախմբվածությունն ամրապնդելու, մեր խնդիրները, իղձերն ու երազները միասնաբար իրականացնելու հարցում հանուն մեր ժողովրդի և Հայրենիքի ԱՊԱՀՈՎ, ԱՆՎՏԱՆԳ զարգացման ու բարգավաճման: